«ԲՈՒԺՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

«ԲՈՒԺՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ» բժշկական ապահովագրությունը հնարավորություն է տալիս բուժել կրիտիկական հիվանդությունները աշխարհի առաջադեմ բուժկենտրոններում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 12) 88 88 88
Կայք՝ www.liga.am

ԻՆՉՆ Է ՀԱՏՈՒՑՎՈՒՄ

- Չարորակ քաղցկեղային գոյացությունների բուժում,
- Սրտի վարկերակի շունտավորում,
- Սրտի փականի փոխարինում,
- Նյարդավիրաբուժական վիրահատություններ,
- Ոսկրածուծի փոխպատվաստում,
- Օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստում կենդանի դոնորից:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով:
Առաջին անգամ պայմանագիր կնքելիս կիրառվում է սպասման ժամկետ 180 օր տևողությամբ՝ սկսած պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից: Սպասման ժամկետի ընթացքում ի հայտ եկած հիվանդությունների բուժումը չի փոխհատուցվում: Գործող պայմանագիրը վերակնքելու դեպքում սպասման ժամկետ չի կիրառվում:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼ

Առաջին անգամ պայմանագրով կարող են ապահովագրվել մինչև 69 տարեկան անձիք, իսկ ապահովագրության պայմանագիրը առանց ընդհատումների վերակնքելու դեպքում՝ մինչև 70 տարեկան անձինք:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 05.12.2020թ. նիստի թիվ 09 արձանագրությամբ հաստատված «Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության» պայմաններում:

ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ աշխարհ, բացառությամբ ՀՀ և ԱՄՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

- Հատուցման տարեկան առավելագույն գումար՝ 500,000 Եվրո:
- Հատուցման առավելագույն գումար ողջ կյանքի ընթացքում՝ 1,000,000 Եվրո:

ՈՐՔԱՆ Է ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Չհատուցվող գումար չի կիրառվում:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Տարիքային խումբ	Տարեկան ապահովագրավճար, ՀՀ դրամ
0-18 տ.	100,000
19-39 տ.	197,000
40-59 տ.	240,000
60-69 տ.	308,000

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ապահովագրության պայմանագրով նախատեսված հիվանդության ի հայտ գալու դեպքում անհրաժեշտ է վանգահարել (+374 12) 88 88 88 հեռախոսահամարին և կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բժշկական փաստաթղթերը կարող են ներկայացվել ապահովագրական ընկերության գրասենյակ կամ ուղարկվել Աջակցող կազմակերպությանը՝ partner@medigo.com էլ. փոստի միջոցով,
- Ապահովագրական հայտի ուսումնասիրությունը կատարվում է բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան 14 օրերի (բարդ դեպքերում մինչև 30 օրերի) ընթացքում,
- Դեպքը ապահովագրական պատահար ճանաչվելուց հետո տեղի է ունենում հետևյալը.

1. Առաջին փուլ. ախտորոշման հաստատում և բուժման եղանակի ընտրություն.

- Բժշկական փաստաթղթերը և տվյալները տրամադրվում են աջակցող կազմակերպությանը,
- Երկրորդ կարծիք. աջակցող կազմակերպության համաշխարհային կարգի մասնագետը տրամադրում է մանրամասն վեկույց,
- Ախտորոշման հաստատման դեպքում առաջարկվում է լավագույն բուժման կուրսը,
- Առաջարկվում են աշխարհի լավագույն մասնագետներ/կլինիկաներ, որտեղ կարող է իրականացվել նշանակված բուժումը,
- Հաճախորդն իրականացնում է մասնագետի/կլինիկայի ընտրություն առաջարկված ցանկից:

2. Երկրորդ փուլ. Բուժում աշխարհի լավագույն բուժհաստատություններում.

- Ընտրված կլինիկայի հետ ձեռք է բերվում համաձայնություն և նշանակվում այցելության/բուժման օրեր,
- Կազմակերպվում է ուղևորությունը և կացությունը հաճախորդի, ուղեկցողի, դոնորի համար (Վիզայի ստացման աջակցում, ավիատոմսերի ձեռքբերում, հյուրանոցի ամրագրում, հիվանդանոց ընդունելության կազմակերպում, բնակության վայր վերադարձ, բնակության երկրում բուժման շարունակության համակարգում):

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Նախկինում առկա վիճակներ, որոնք առաջացել են պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին նախորդող 10 տարվա ընթացքում, բացառությամբ սպասման ժամկետի ընթացքում հայտնաբերված ցանկացած առողջական վիճակ կամ ախտանիշ, որը հետագայում հանգեցնում է առողջական վիճակի,
- Կյանքի արհեստական պահպանումը, այդ թվում՝ հատուկ կյանքը պահպանող սարքավորման օգտագործումը, ինչը բուժող բժշկի կամ բժիշկ-մասնագետի կարծիքով չի հանգեցնի ապաքինման կամ չի վերականգնի Ձեր նախկին առողջական վիճակը,
- Ալկոհոլի, թմրադեղերի չարաշահումից, կախվածությունից, կամ ալկոհոլի, հոգեմետ դեղերի, փսիխոդելիկ թմրադեղերի և/կամ թմրանյութերի ազդեցության տակ գտնվելու և/կամ դրանց հետևանքներից տառապելու արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացած ցանկացած առողջական վիճակի և/կամ մարմնական վնասվածքի բժշկական բուժում և/կամ խնամք,
- Շագանակագեղձի ուռուցքների բոլոր տեսակները, բացառությամբ չարորակների և ապահովագրական ընկերության կողմից հաստատված վիրահատություն պահանջող դեպքերի,
- Մաշկի քաղցկեղի բոլոր տեսակները (ներառյալ մաշկի լիմֆոման), քանի դեռ մաշկի քաղցկեղը հաստատված չէ որպես չարորակ և ավշահանգույցները կամ հեռավոր օրգանները չեն ախտահարվել, բացառությամբ չարորակ մելանոմայի, որը հյուսվածքաբանությամբ դասակարգվել է որպես էպիդերմիսի (մաշկի արտաքին շերտի) տակ տարածված,
- Միջմաշկային տրանսլյումինար կորոնար անգիոպլաստիկա (PTCA), սրտի կաթետերիզացիա, բալոնային լայնացում, ռադիոհաճախականությամբ լազերային մեթոդների կիրառում և այլ ինվազիվ և էնդոսկոպիկ պրոցեդուրաներ, որոնք չեն պահանջում սրտի բաց վիրահատություն,
- Քիմիական կամ կենսաբանական աղտոտման, ասբեստի ազդեցության կամ որևէ միջուկային նյութի ճառագայթման հետևանքով (անկախ այն բանից, թե վերը նշված աղտոտումը/ազդեցությունը ինչպես է առաջացել (այդ թվում՝ պատերազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում առաջացած կամ եթե դրանք նպաստել են առաջացմանը) ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացած առողջական վիճակի բուժում կամ վերը նշվածի հետևանք հանդիսացող ցանկացած ապահովագրական պատահար,
- Պատերազմի, ներխուժման, թշնամու գործողության, թշնամության (անկախ պատերազմի հայտարարված լինելուց), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, քաղաքացիական իրարանցման, վինված կամ զավթող ուժերի կամ ցանկացած ահաբեկչական գործողությունների հետևանքով առաջացած պատահարները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասվածքը/հիվանդությունը ստացվել/ձեռք է բերվել անմեղ դիտորդի մոտ և ոչ միջուկային, քիմիական կամ կենսաբանական վենքի ազդեցության կամ աղտոտման հետևանքով,
- Գլխուղեղային համախտանիշի, ծերունական թուլամտության կամ գլխուղեղային խանգարման բուժման կամ հատուկ պայմաններում պահպանման դիմաց որևէ ծախսեր,

- Բնածին խանգարումներ, որոնք արտահայտվել են պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից առաջ, և որոնց գծով Դուք նախկինում դիմել եք բուժում կամ խորհրդատվություն ստանալու համար,
- Կանխամտածված, խարդախության հատկանիշներ պարունակող, ապօրինի, քրեական բնույթ ունեցող, ինչպես նաև հեղինակությանը սպառնացող գործողություններ ապահովագրված անձի կողմից,
- Կենսաակտիվ սննդային հավելումներ և նյութեր՝ներառելով, սակայն չսահմանափակվելով հետևյալով. վիտամիններ, միներալներ, սպիտակուցային հավելումներ, մանկական սնունդ և օրգանիկ նյութեր՝ անկախ բուժող բժշկի/բժիշկ-մասնագետի կողմից նշանակված լինելու և/կամ թերապևտիկ ազդեցություն ունեցող համարվելու հանգամանքից,
- Միջազգայնորեն կամ տեղային մասշտաբով որպես համաճարակ կամ պանդեմիա դասակարգված երևույթներին վերաբերող առողջապահական ծառայություններ,
- Ընդհանուր պրակտիկայի համաձայն փորձարարական չհիմնավորված համարվող կամ չարտոնագրված բժշկի կամ անմիջական ընտանիքի անդամի կողմից տրամադրված բուժման, ծառայությունների կամ դեղորայքային թերապիայի գծով ցանկացած ծախս,
- Հատուցման ենթակա չեն ՁԻԱՀ-ի (ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ), ՄԻԱՎ-ի (մարդու իմունային անբավարարության վիրուս) կամ դրանցից բխող ցանկացած վիճակի (այդ թվում՝ Կապոշիի սարկոմա) հետևանքով պահանջվող բժշկական պրոցեդուրաները կամ ՁԻԱՀ-ի/ՄԻԱՎ-ի գծով որևէ բուժում,
- Բուժմանը կամ բժշկական խորհրդին չհետևելու, բուժման կամ բժշկական խորհրդատվության համար չդիմելու, բժշկական խորհրդատվության կամ բուժման համար դիմելն առանց պատճառի հետաձգելու կամ խորհրդատվությունը արհամարհելու հետևանքով առաջացած բարդություններից բխող կամ դրանց հետ կապված բուժում: Ցանկացած պատահար, որն առաջացել է ապահովագրված անձի 28 շաբաթից ավել ժամկետով հղիության ժամանակ օդային ճանապարհորդության արդյունքում,
- Ցանկացած բարդություն, որն առաջացել է օրգանի փոխպատվաստման հետևանքով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բարդությունն առաջացել է փոխպատվաստման օրգանի նախապես հաստատված ստացիոնար, ցերեկային ստացիոնար կամ հետվիրահատական ամբուլատոր բուժման ընթացքում,
- Հատուցման ենթակա չեն 90 օր ժամկետը գերազանցող սպառման համար նշանակվող դեղատոմսերը՝ Ձեր մշտական բնակության երկրում դեղորայքային բուժումը շարունակելու կապակցությամբ,
- Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժում,
- Բուժման ծախսերը, որոնք հետևանք են ինքնասպանության, ինքնասպանության փորձի, դիտավորությամբ ինքն իրեն վնաս պատճառելու, անփույթ կամ անպատասխանատու վարքի և/կամ անհիմն վտանգի ենթարկվելու՝ բացառությամբ մարդկանց կյանքը փրկելու փորձի,
- Հեռախոսազանգերի ծախսերը,
- «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից 05.12.2020թ. նիստի թիվ 09 արձանագրությամբ հաստատված «Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության» պայմաններով սահմանված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- **Առկա հիվանդությունները, ինչպես նաև սպասման ժամկետի ընթացքում առաջացած հիվանդությունները չեն փոխհատուցվում,**
- **Բոլոր բուժումները և հարակից ծախսերը պետք է նախապես համաձայնեցվեն ապահովագրական ընկերության հետ,**
- **Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:**

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: